



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4 «30» 01 2015 թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Չ.Համբարձումյանի «Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության 2013 և 2014 թվականների իրավիճակի համեմատական վերլուծություն» թեմայով զեկուցումը,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի աշխատանքային գործունեությունը գնահատել թավարար:
2. Հանձնարարել հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Ա.Չ.Համբարձումյանին
 - 2.1 ՀՀ առողջապահության բնագավառի մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների նոր ցանկի համաձայն կազմել և հաստատել մասնագիտական հետբուհական ուսումնական ծրագրեր,
 - 2.2 միջոցառումներ ձեռնարկել արտագնա կատարելագործման դասընթացները խթանելու ուղղությամբ:
3. Հաստատել օրդինատուրայի (գլուխ 3՝ 11, 17 կետեր) և ինտերնատուրայի (գլուխ 2՝ 11 կետ) կանոնակարգերի կրթական կանոնների փոփոխություններն ու լրացումները:
4. Թույլ տալ օրենքի սահմաններում ավարտական կուրսի կլինիկական օրդինատուրաներին կատարել վարձատրվող հերթապահություններ պատասխանատու բժշկի հսկողության պայմաններում. վարձատրությունը կատարել համալսարանի բուժաշխատողների համար սահմանված կանոններով:
5. Հետբուհական ուսուցման բարեփոխման նպատակով, որպես պիլոտային ծրագիր, մշակել և ներդնել լրացուցիչ մասնագիտացումների մոդուլային ուսուցման համակարգ:
6. Հանձնարարել պալիատիվ (ամորֆ) բժշկական օգնության և սպասարկման միջառարկայական կրթական խմբին՝ մշակել և հաստատման ներկայացնել մասնագիտացման կրթական ծրագիր:
7. Համալսարանական բժշկական հաստատություններում անվճար հիմունքներով կամ պետպատվերի շրջանակներում կազմակերպել և աջակցել Իջևանի ՍՕՍ մանկական գյուղի մասնագիտացված բժշկական օգնության կարիք ունեցող երեխաների բուժումը:
8. Հաստատել «ՈՒսանողների գնահատման համակարգում տուգաբքների և քննությունների անցկացման ու հանձնման կարգի» և «Բակլավմրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգի» փոփոխությունները:
9. Մույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Մ.Զ.Նարինանյանին և արդյունքներին անդրադառնալ 2015թ. դեկտեմբերին:

Նախագահ՝

Գիտքարտուղար՝

պրոֆ. Մ. Զ. Նարինանյան

պրոֆ. Տ. Գ. Ավագյան